ԵՐԻՏԱՍԱՐԴԱՀԵՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻԾՆԵՐ

Հեղինակներ
Արեգ Թադևոսյան, Զարուհի Լավչյան

Խմբագրական թիմ
Անահիտ Մինասյան, Տաթևիկ Հովհաննիսյան, Անուշ Հայրապետյան

«Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ» փաստաթուղթը մշակվել է «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի «Երիտասարդները հանուն զարգացման» ծրագրի շրջանակներում՝ Վրաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանատան աջակցությամբ: Ուղենիշների նպատակն է թիրախ խմբին (տեղական ինքնակառավարման մարմիններ, երիտասարդներ և երիտասարդական խմբեր/կազմակերպություններ) ներկայացնել երիտասարդահեն զարգացման գաղափարը իր 5 հիմնական սկզբունքներով և թիրախ խմբերի կողմից դրանց կիրառման գործնական խորհուրդներ, ինչպես նաև ներկայացնել ՀՀ տարբեր համայնքներում իրականացված երիտասարդահեն զարգացման ծրագրեր:

«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 24-5
Հեռ՝ +374 10 58 40 32
kasaam@kasa.am

© «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
Երևան 2017

KOMITAS ACTION SUISSE - ARMÉNIE

Kingdom of the Netherlands

Բովանդակություն

«Երիտասարդները հանուն զարգացման» ծրագրի մասին

Ի՞նչ է երիտասարդների մասնակցությունը

Երիտասարդների մասնակցության սահմանումը

Երիտասարդների մասնակցության մոդելները

Երիտասարդության մասնակցությունը տարբեր ոլորտներում

«ՏԻՄ-երիտասարդ/-ական կազմակերպություն» համագործակցության առավելությունները

Ի՞նչ է երիտասարդահեն զարգացումը

Ուղենիշներ

Երիտասարդահեն զարգացման ծրագրերի օրինակներ

Վերջաբան

«Երիտասարդները հանուն զարգացման» ծրագրի մասին

Ծրագիրը մեկնարկել է 2015թ.-ին՝ նպատակ ունենալով խթանել երիտասարդների և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) համագործակցությունը՝ իրենց համայնքների զարգացման համատեքստում: Ծրագրի մասնակիցները Հայաստանի 5 մարզերի (Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Արագածոտն, Սյունիք) և Երևանի 18-30 տարեկան 20 երիտասարդներ են: Ծրագրի մեթոդաբանության հիմքում ընկած է «երիտասարդահեն զարգացում» գաղափարը: Ըստ վերջինիս՝ համայնքային խնդիրները և մարտահրավերները կարող են համապատասխան և նորարարական լուծումներ ստանալ երիտասարդական ներուժի ակտիվ ներգրավման միջոցով: Ծրագիրը կազմված է մի շարք բաղադրիչներից՝ վերապատրաստումներ, հեռավար ուսուցում, ՏԻՄ-երի հետ ակտիվ համագործակցության միջոցով համայնքներում երիտասարդահեն ծրագրերի իրականացում, ճանաչողական այցելություններ տարբեր համայնքներ, երիտասարդների զորացումը և մասնակցությունը խթանող ուսուցողական խաղերի մշակում և այլն:

Ի՞նչ է երիտասարդների մասնակցությունը

Երիտասարդների մասնակցության սահմանումը

Մասնակցությունը անձի և իր համայնքի կյանքի վրա ազդող որոշումների ընդունման գործընթացում նրա ներգրավումն է: Երկրի քաղաքական, հասարակական, մշակութային, գիտական և տնտեսական կյանքին քաղաքացիների մասնակցությունն ապահովված է ազգային և միջազգային մի շարք իրավական նորմերով (երկրի սահմանադրություն, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր և մարդու իրավունքների ոլորտի այլ համաձայնագրեր, երեխաների, կանանց իրավունքներն ամրագրող համաձայնագրեր և այլն):

Այսօր համայնքային կյանքին և որոշումների ընդունման մեջ երիտասարդների մասնակցությունն ունի տարբեր ձևեր, հարթակներ և ձևաչափեր՝ ավանդական ձևերից մինչև թվային մասնակցության ապահովման գործիքներ: Արշավներ, քվեարկություն, քաղաքական կուսակցությունների անդամություն, քարոզարշավներ, գրություններ, ֆորումներ, հավաքներ, բանավեճեր, առցանց արշավներ, քաղաքացիական ակտիվության և արձագանքման հավելվածներ, այլընտրանքային ընտրություններ, արտիստիկ արտահայտումներ, բլոգներ, տեղեկատվական ակտիվիզմ. ահա միայն մի քանիսը մասնակցության և սեփական կարծիքի արտահայտման գործիքարանից, որոնք ակտիվորեն օգտագործվում են այսօր:

Այսօր արդեն գրեթե ոչ մեկի մոտ կասկած չի առաջանում, որ կայուն, շարունակական, հավասարակշռված, բոլորի համար հավասար, համապատասխան և արդար, ողջամիտ, գործուն և հիմնավորված զարգացման համար քաղաքացիական մասնակցությունը նախապայման և հաջողության գրավական է: Նույն իրավիճակն է երիտասարդների մասնակցության դեպքում: Ոչ ոք սեփական խնդիրներն առավել լավ չի պատկերացնում, քան այն երիտասարդը, ով ամեն օր կանգնած է դժվար իրավիճակների, որոշումների կայացման, ընտրության, անորոշության, անվստահության, նոր կյանքի մարտահրավերների առջև: Ուստի՝ միայն երիտասարդի մասնակցությամբ է հնարավոր հստակ պատկերացում կազմել թե՛ առկա իրավիճակի, թե՛ հնարավոր լուծումների, թե՛ հնարավորությունների և ակնկալիքների մասին:

Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիայում նշվում է, որ երիտասարդների մասնակցությունը ցանկացած համայնքի ժողովրդավարական կյանքին ավելին է, քան պարզապես ընտրություններում քվեարկելը կամ առաջադրվելը, թեև դրանք նույնպես կարևոր հանգամանքներ են: Մասնակցել և ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ցուցաբերել նշանակում է մասնակցության իրավունք, միջոցներ, աջակցություն ունենալ՝ նպաստելով ավելի լավ հասարակության կառուցմանը: Համայնքային կյանքին երիտասարդների լիակատար և իմաստալից մասնակցության ապահովման համար հարկ է ապահովել հինգ հիմնական պայման՝ մասնակցության իրավունք, հարթակ, միջոց, հնարավորություն և աջակցություն (երբ կա դրա կարիքը): Այս մոտեցումն ամրագրված է նաև Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիայում: Խարտիան նաև նշում է, որ տեղական իշխանությունները պետք է մաքսիմալ սատարեն, աջակցեն, ստեղծեն հնարավորություններ համայնքային կյանքի ամենատարբեր ոլորտներում երիտասարդների մասնակցության համար: Դա պետք է արվի տեղական հասարակական կազմակերպությունների, խմբերի, անհատների, դերակատարների աջակցության միջոցով:

Քաղաքացիական մասնակցության ապահովման և իշխանությունների հետ համագործակցության բազմաթիվ մեխանիզմներ են գործում այսօր, որոնց շարքում են տարբեր տիպի և ձևաչափի խորհուրդները, քաղաքացիների հետ անցկացվող խորհրդակցությունները, համակառավարման համակարգերը: Բացի այդ, գործում են նաև համատեղ նախաձեռնությունների, կանոնակարգային խնդիրների պատվիրակման, դրամաշնորհային և կառուցվածքային ֆինանսավորման և տեղեկատվության փոխանակման մոդելները: Բոլոր այս մեթոդներն ու մոդելները միտված են երիտասարդների և իշխանությունների համատեղ ջանքերով լուծումներ գտնելուն այն խնդիրների համար, որոնց առկայության պարագայում երիտասարդների կյանքի որակն ընկնում է:

Տեղական և մարզային իշխանությունները, որպես երիտասարդներին ամենամոտ կանգնած իշխանության ձև, շատ կարևոր դեր ունեն երիտասարդների մասնակցությունը խրախուսելու հարցում: Որպեսզի երիտասարդների մասնակցությունը և իշխանությունների հետ համագործակցությունն ու գործընկերային հարաբերությունները և աշխատանքը ճիշտ կառուցվեն, պետք է պահպանվեն գործընկերության կառուցման մի քանի հիմնական սկզբունքներ: Այսպես՝ մասնակցությունը պետք է լինի հավասար, ճանաչված, հարգված և գնահատված, մասնակիցների իրական կարիքների վրա հիմնված և բոլորի համար արդյունավետ, ներառի տարբեր մասնակցող խմբերի համար համապատասխան մասնակցային եղանակներ և ձևեր, լինի թափանցիկ և շարունակական:

1 Խարտիան՝ առանց կոնվենցիայի կարգավիճակի, ընդունվել է Եվրոպայի տեղական և մարզային իշխանությունների կոնգրեսի կողմից (2003թ., մայիսի 21, 10-րդ նիստ, Հանձնարարական 128-ի հավելված)

Երիտասարդների մասնակցության մոդելները

Ժամանակակից տեսաբաններն ու գործնականում մասնակցային գործընթացներում ներգրավված մասնագետներն առանձնացնում են երիտասարդների մասնակցության մի քանի մոդելներ և մասնակցության աստիճաններ: Մոտեցումը հետևյալն է՝ երիտասարդների վերաբերյալ բոլոր որոշումները պետք է կայացվեն երիտասարդների անմիջական մասնակցությամբ: Նմանատիպ մասնակցության և երկխոսության համար առկա են բազմազան հնարավորություններ, որոնցից են հանրային և ֆորումային քննարկումները, կլոր սեղանները, երիտասարդական և համայնքային խորհուրդները, համայնքային բյուջեի մասնակցային գործընթացները, շարունակական պարբերական հանդիպումները: Ամենօրյա կյանքի բազմազան ոլորտներում երիտասարդների մասնակցությունը տարբեր աստիճանների վրա կարող է գտնվել՝ կախված որոշումների կայացման մեջ նրանց ունեցած ազդեցության չափից: Անգլիացի գիտնական Ռոջեր Հարթը մշակել է մասնակցության ութաստիճան մոդել (հիմնվելով Ծ. Արնշտայնի քաղաքացիական մասնակցության սանդղակի վրա), որը ներկայացնում է, թե որոշումների ընդունման մեջ ինչպես են փոխգործում որոշում ընդունողներն ու երիտասարդները: Մոդելի նկարագրության հիմքում դրված են երկու գործոն՝ ով է նախաձեռնության/գաղափարի հեղինակը, և ովքեր են ներգրավված վերջնական որոշումների ընդունման մեջ:

Ռ. Հարթի աստիճանակարգը

	Նկարագրություն	Օրինակ
8. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Նախաձեռնությունն ամբողջությամբ երիտասարդներինն է: Երիտասարդները համագործակցում են մեծահասակների հետ՝ օգտագործելով նրանց գիտելիքներն ու փորձառությունը հօգուտ նախաձեռնության:	Բուհի ուսանողները որոշում են ստեղծել ուսանողական գիտական ընկերություն, որը պետք է մշակի նորարարական հետաքրքիր գաղափարներ, որոնք կարող են կիրառվել բիզնեսում: Ընկերությունը կազմում է իր կառավարման խորհուրդը, որտեղ որոշվում է նաև ներգրավել համապատասխան ֆակուլտետների ճանաչված դասախոսների և մի քանի ինստիտուտի գիտնականների, որոնք կարող են նպաստել այդ ընկերության զարգացմանը:
7. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ	Նախաձեռնությունն ամբողջությամբ երիտասարդներինն է: Երիտասարդներն իրենք են մշակում նախաձեռնությունը, հայթայթում միջոցները և իրականացնում այն:	Երիտասարդական խումբը որոշում է աղետից տուժած այն ընտանիքների համար, որոնք դեռ ապրում են տնակներում, լուծել բնակարանային խնդիրներ: Նրանք կազմում են ֆոնդահայթայթման «քրաուդֆանդինգային» ծրագիր, հավաքում են միջոցներ և իրականացնում են բնակարանների ապահովման ծրագիրը բացարձակ ինքնուրույն և ըստ իրենց իսկ որոշած ծրագրի:
6. ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդներն ու մեծահասակները նախաձեռնության իրականացման ընթացքում հավասարազոր ձայնի իրավունք ունեն:	Համակառավարման մեխանիզմ. կառավորությունը ստեղծում է իրեն առընթեր Երիտասարդական քաղաքականության խորհուրդ, որտեղ 50/50 սկզբունքով ներգրավվում են երիտասարդական կազմակերպությունների անդամներ, փորձագետներ և համապատասխան նախարարությունների ներկայացուցիչներ, որոնք համատեղ որոշումներ են ընդունում երիտասարդական քաղաքականության զարգացման ուղղությունների վերաբերյալ:
5. ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդները տեղեկացված են և իրենց կարծիքը հաշվի է առնվում: Այն կարող է ընդունվել կամ չընդունվել:	Քաղաքի բարեկարգման ծրագրերի մշակման ժամանակ քաղաքային իշխանություններն առցանց գործիքների միջոցով հնարավորություն են ստեղծում երիտասարդական խմբերին մասնակցել բյուջեի բաշխմանը՝ քվեարկելով այս կամ այն բարեկարգման ծրագրի համար: Նրանց կարծիքները հաշվի են առնվում վերջնական որոշման կայացման մեջ:
4. ՏԵՂԵԿԱՑՈՒՄ	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդները տեղեկացվում են նախաձեռնության նպատակի և բոլոր գործընթացների մասին, իսկ մասնակցում են որպես կատարողներ:	Կազմակերպություններն իրականացնում են ծրագրեր երիտասարդների համար, երիտասարդ անդամները մասնակցում են կազմակերպության թիրախ խմբերի համար տրամադրվող բազմաթիվ ծառայությունների մատուցմանը, սակայն որևէ կերպ չեն մասնակցում կազմակերպության կառավարմանը, ծրագրերի մշակմանը և նյութական ռեսուրսների բաշխմանը:
3. ԻՄԻՏԱՑԻԱ	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակ-ներինն է: Երիտասարդներին հրավիրում են «մասնակցելու» մեծահասակների աշխատանքին: Այդ խմբերը կայացնում են մեծահասակների կողմից թելադրված կամ ոչ մեկին չհետաքրքրող, որևէ ազդեցություն չգործող որոշումներ:	Քաղաքական կամ հասարակական ոլորտում ռազմավարական ծրագրերի մշակման ընթացքում երիտասարդների որոշ խմբերի շրջանում անց են կացվում հանրային լսումներ, սակայն դրանց կողմից առաջարկված գաղափարների ներառման իրական հնարավորություններ և մեխանիզմներ չկան:
2. ԴԵԿՈՐԱՑԻԱ	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդներին օգտագործում են որպես զարդարանք՝ մեծահասակների գործունեությանը հավելյալ կշիռ և դրական տպավորություն հաղորդելու համար:	Նախագահական կամ այլ ընտրությունների ժամանակ հեռուստատեսությամբ հաճախ ցույց են տալիս թեկնածուների այցերը դպրոցներ և մանկապարտեզներ: Պաստառների և թռուցիկների վրա տեղադրվում է թեկնածուի լուսանկարը երեխաներին գրկած կամ երիտասարդների հետ քննարկումներ վարելիս:
1. ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱ	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակ-ներինն է: Երիտասարդները պարզապես ներկա են գտնվում և հետևում հրահանգների: Երիտասարդները չգիտեն՝ ինչու են մասնակցում այդ միջոցառումներին ու գալիս են՝ այլ դրդապատճառներից ելնելով:	Միջոցառման կազմակերպիչները բաժանում են երիտասարդներին տարբեր պատկերներով և տեքստերով շապիկներ և տանում որևէ թեմայով հավաքի կամ ֆլեշմոբի մասնակցելու: Որպես կանոն նրանց չի բացատրվում տվյալ միջոցառման էությունը, նպատակը, իրենց դերն ու մասնակցության իմաստը:

Առաջին երեք աստիճանները (մանիպուլյացիա, դեկորացիա և իմիտացիա) բնութագրվում են խիստ ցածր մասնակցության աստիճանով և կարող են նույնիսկ համարվել ոչ մասնակցություն: Հաջորդ երեքը (տեղեկացում, խորհրդակցում, համատեղ որոշումների կայացում) ավելի մասնակցային են և կարող են բնութագրվել որպես ցածր աստիճանի մասնակցային գործընթացներ, և վերջին երկուսը (ինքնուրույնություն և համագործակցություն) կարելի է բնութագրել որպես մասնակցության առավել բարձր աստիճաններ:

Իմաստալից, ազդեցիկ, տեղեկացված և գիտակցված մասնակցությունը մի գործընթաց է, որին միանալուն յուրաքանչյուրը պետք է պատրաստ լինի: Ուստի՝ հասկանալի է, որ անհրաժեշտ է զարգացնել գործընթացում ներգրավված դերակատարների հավասար մասնակցության և որոշումների կայացման մեջ ընդգրկման ունակություններ: Դրանք հաճախ կարելի է զարգացնել՝ հենց մասնակցային տարբեր համատեքստերում ներգրավվելով, փորձ ձեռք բերելով, կրթվելով և սեփական մոտիվացիան զարգացնելով: Այս մոտեցման վրա է հիմնված, օրինակ՝ Ս. Դեվիդսոնի մասնակցության անիվային մոդելը. այստեղ մասնակցությունն սկսվում է տեղեկացումից, որին հաջորդում են խորհրդատվությունը, ակտիվ մասնակցությունը և նախաձեռնության սատարումը՝ ազդեցության մաքսիմալացմամբ:

Նման աստիճանական մոտեցում կարելի է գտնել նաև այլ մոդելներում, որտեղ որոշում կայացնողները սատարում են, ունակություններ են զարգացնում և աջակցում քաղաքացիներին ներգրավվել և իրենց վրա վերցնել խնդիրների լուծման պատասխանատվությունն ու պարտականությունը՝ աստիճանաբար քաղաքացիներին զիջելով իրենց առաջատար և ազդեցիկ դերը:

Մասնակցային հետաքրքիր մոդել է համաղեկավարումը: Այդ համակարգում որոշում կայացնողները/իշխանությունները և այն մարդիկ, ում վերաբերում են այդ որոշումները, համատեղ քննարկումների արդյունքում կայացնում են քաղաքական որոշումներ: Օրինակ՝ Եվրախորհրդում երիտասարդական քաղաքականությունը որոշվում, կարգավորվում ու կառավարվում է նման համակառավարման հարթակի միջոցով: Այն կոչվում է Ընդհանուր խորհուրդ, որը կազմված է ԵԽ անդամ երկրների կառավարությունների երիտասարդության հարցերով զբաղվող կառույցների և միջազգային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Համատեղ քննարկումների և փոխհամաձայնության արդյունքում է, որ ընդունվում են վերջնական որոշումները:

Իսկ ո՞ր աստիճանի վրա է գտնվում երիտասարդների մասնակցությունը Ձեր համայնքում:

Ի՞նչ կարող եք անել համայնքում երիտասարդների մասնակցության ու ներգրավման աստիճանն ու ազդեցությունը բարձրացնելու համար:

Երիտասարդության մասնակցությունը տարբեր ոլորտներում

Հաճախ երիտասարդական ոլորտում հնչում է հետևյալ հարցը. «Ո՞ր ոլորտներում է հատկապես անհրաժեշտ երիտասարդների մասնակցությունը և համագործակցությունը համայնքային իշխանությունների հետ»: Այս հարցն ինքնին սխալ է, քանզի բոլոր հարցերում երիտասարդների մասնակցությունը պարտադիր ու ցանկալի է, սակայն իհարկե կան ոլորտներ, որտեղ երիտասարդներն առավել խորն աջակցության և սատարման կարիք ունեն՝ տարիքից և կյանքի իրավիճակներից ելնելով, ուստի՝ այդ ոլորտներում իրենց ներդրումն ունի բացառիկ անհրաժեշտություն: Այդ ոլորտներն են հատկապես սոցիալական ապահովումը, զբաղվածությունը, բնակության վայրի ապահովումը, տրանսպորտը, ենթակառուցվածքների կառուցումը, առողջապահությունը, կրթությունը, ժամանցը, հավասարությունն ու ոչ-խտրականությունը, ընտանիքն ու հարաբերությունները, իրավունքները և այլն:

Ինչպե՞ս կարող են երիտասարդները ներգրավվել որոշումների կայացման գործընթացում և ի՞նչ փոփոխություններ կարող են մտցնել իրենց և իրենց համայնքի կյանքում:

Ահա ոլորտների ու անելիքների մի քանի օրինակ.

Որակյալ ժամանցի կազմակերպման հարցը բավականին լուրջ է դրված: Շատ համայնքներում երիտասարդները բառացիորեն չունեն մի վայր, որտեղ կարող են հանդիպել, շփվել, որևէ բան սովորել, հետաքրքիր անցկացնել իրենց ժամանակը: Համայնքներում նման վայրեր կարող են լինել երիտասարդական կենտրոններն ու հայորդաց տները, մշակութային ակումբները, խաղահրապարակները, սպորտային հրապարակները, հոբբի ակումբները և այլն: Ուստի՝ երիտասարդները, համախմբվելով, օրինակ՝ ֆուտբոլի կամ երաժշտության շուրջ, կարող են դիմել տեղական իշխանություններին՝ խնդրելով ֆուտբոլ խաղալու տարածք/դաշտ, գնդակներ և հագուստ տրամադրել կամ տարածք ապահովել պարի պարապմունքների համար:

Զբաղվածության և աշխատանքի տեղավորման հարցերը երիտասարդների ամենաարդիական խնդիրներից են: Այս խնդիրների լուծման մեջ առաջնային է ունենալ համապատասխան աջակցություն սեփական բիզնեսի նախաձեռնման և հիմնադրման, տեղում զբաղվածության կենտրոնների ստեղծման և շարունակական գործարկման, ինչպես նաև կարիերայի կողմնորոշման ոլորտում: Երիտասարդները կարող են խթան հանդիսանալ համայնքում նման կառույցների ստեղծման համար և համատեղ պլանավորել, թե ինչպես կարող են դրանք աշխատել և առավելագույն աջակցություն ցուցաբերել դրա կարիքն ունեցող յուրաքանչյուր երիտասարդի:

Համայնքում հասարակական տարբեր վայրերի ստեղծումը, կառուցապատումները, շինարարական պլանավորումը, նոր բնակելի շենքերի կառուցումը այն ոլորտներն են, որտեղ քաղաքացիների ու, հատկապես, երիտասարդների մասնակցությունը ցանկալի և անհրաժեշտ պայման է: Երիտասարդներին խորհուրդներում, շարժումներում կամ քննարկման տարբեր հարթակներում ներգրավելու միջոցով հնարավոր է վերհանել երիտասարդներին հուզող խնդիրները, ներկայացնել նրանց կարիքներն ու ակնկալիքները՝ կապված երիտասարդների համար ժամանցի, կրթական և սպորտային վայրերի, մատչելի բնակարանների կառուցման վերաբերյալ: Բացի այդ, հնարավոր է համատեղ ստեղծել տեղեկատվական-խորհրդատվական հարթակ, որտեղ կարող են քննարկվել համայնքի բոլոր փոփոխությունները: Արդեն կան երկրներ, որտեղ հեռախոսների հավելվածների միջոցով կամ առցանց մարդիկ մասնակցում են քաղաքային պլանավորմանը, բյուջեի բաշխմանը և այլն:

Կրթության ոլորտը երիտասարդներին անմիջականորեն առնչվող ոլորտ է, որտեղ անգամ ուսուցման կազմակերպման, ուսումնական պլանների մշակման, կառույցի կառավարման հարցերում ուսուցանվողների մասնակցությունն ազդում է ոչ միայն կրթության որակի, այլև կառույցում տիրող միջավայրի, ուսուցանվողների մոտիվացիայի, ներգրավման, կամավորական ներգրավվածության, կառույցի աշխատանքների որակի վրա: Կրթօջախներում մասնակցության մեխանիզմները հիմնականում ուսանողական և աշակերտական խորհուրդներն են, սակայն դրանք ոչ բոլոր հաստատություններում են գործում և տեղական իշխանությունները կարող են աջակցել կրթօջախներում համակառավարման կամ մասնակցային կառավարման համակարգերի ներդրմանը:

Առողջապահության, առողջ ապրելակերպի, բարեկեցության հարցերը առաջնային կարևորություն ունեն ու հետզհետե ավելի ու ավելի հրատապ են դառնում՝ հաշվի առնելով գլոբալ բնապահպանական մարտահրավերները և առողջ վարքագծի փոփոխման միտումները: Սույն ոլորտներում քաղաքականությունների, անելիքների պլանավորման, կառույցների ստեղծման և երիտասարդներին համապատասխան և հասանելի տեղեկատվության տարածման, ծառայությունների ստեղծման և մատուցման մեջ երիտասարդների ներգրավումը հույժ կարևոր դեր է կատարում այդ գործընթացների արդյունավետության բարձրացման գործում:

«ՏԻՄ-երիտասարդ/-ական կազմակերպություն» համագործակցության առավելությունները

Բոլորի համար ակնհայտ է, որ միայն միահամուռ ու համատեղ աշխատելով է հնարավոր ստեղծել կայուն համակարգ՝ շարունակական, հավասար, արդար, սոցիալապես արդար ու ինտեգրված իրավիճակի, բարեկեցության և զարգացման ապահովման համար: Սա առկա ռեսուրսներն օգտագործելու ու փոխօգնության միջոցով մեր առջև ծառացած խնդիրները լուծելու ամենաարդյունավետ տարբերակն է: Մասնակցությունն այն գործիքն է, որը համագործակցության դռներ է բացում և փոխադարձաբար հարստացնող է գործընթացի բոլոր դերակատարների համար: Մասնակցության կարևորության ու արժեքի մասին խոսում են գրեթե բոլոր հանրային կառույցները, և ստորև ներկայացված են համատեղ մասնակցային աշխատանքի կարևորության մի քանի նկարագրություններ:

Մասնակցությունը ինքնանպատակ չէ, այն առավել գլոբալ և մեծ գործընթացի, սկզբունքային փոփոխությունների, համայնքային կառավարման նոր ձևաչափեր փորձարկելու հիմք և խթան է հանդիսանում: Այս համագործակցությունը կարող է լինել արդյունավետ երիտասարդների և ողջ համայնքային կյանքում, քանի որ բարեփոխումների հնարավորություններ է տալիս, քանի որ հնարավորություն է տալիս իրական գոյություն ունեցող խնդիրներ լուծել՝ մոբիլիզացնելով իրական մարդկանց ունակությունները:

Լինելով սկզբունքային մոտեցում՝ մասնակցությունը դաշտ է ստեղծում, որպեսզի երիտասարդները լսված լինեն և իրենց կարողությունների սահմաններում ներդրում կատարեն իրենց և այլոց կյանքի բարելավման մեջ:

Հավասարության ու հարգանքի վրա հիմնված թափանցիկ մասնակցային գործընթացները հնարավորություն են տալիս զարգացնել մի շարք մասնագիտական և անհատական որակներ և ունակություններ, հնարավորություն են տալիս գործընթացի մասնակիցներին դառնալ առավել ինքնավստահ:

Մասնակցային գործընթացներն ու հարաբերությունները հնարավորություն են տալիս համայնքի բնակիչներին և իշխանություններին ավելի լավ ճանաչել միմյանց, իմանալ սեփական և այլոց ուժեղ և թույլ կողմերը, և, համալրելով միմյանց, ստեղծել ուժեղ համայնքներ: Համատեղ գործունեությունը հնարավորություն է տալիս բացահայտել ամեն դերակատարի տաղանդն ու պոտենցիալը: Նման գործընթացներում իշխանությունները ևս սովորում են, թե ինչպես արդյունավետ կերպով աշխատել երիտասարդների հետ:

Համայնքային կյանքին մասնակցելով՝ երիտասարդները սովորում են ստանձնել պարտավորություններ, դառնում են կայացրած որոշումների իրագործման պատասխանատուներ:

Մասնակցային գործընթացները նոր հոգեկերտվածք առաջացնելու ներուժ ունեն: Դրանք խթանում են համագործակցությունը, այլ ոչ թե մրցակցությունը, բարձրացնում վստահությունը միմյանց հանդեպ:

Իշխանություններն ի պաշտոնե ունեն իրենց վրա դրված պարտավորություններ, աշխատանքային պլաններ, անելիքներ, որոնք միտված են համայնքային կյանքի բարելավմանը: Երիտասարդներին համայնքային տարբեր խնդիրների վերաբերյալ քննարկումների մաս դարձնելով՝ իշխանությունները կարողանում են առաջին ձեռքից տեղեկատվություն ստանալ նրանց ակնկալիքների, անհանգստությունների, առկա հոգեվիճակի, ցանկությունների, նկրտումների, առաջնայնությունների մասին: Սա հույժ կարևոր է տեղական քաղաքականությունները մշակելու համար, քանի որ դրանք, հիմնված լինելով առավելագույն կարիքների վրա, չեն հանգեցնի հասարակական բացասական արձագանքի, այլ կստարվեն համայնքների կողմից: Ո՞վ երիտասարդից առավել լավ գիտի երիտասարդական խնդիրները, ո՞վ է երիտասարդից ավելի լավ փորձագետ այդ ոլորտում:

Մեծահասակները, որոշումներ կայացնողներն ունեն մեծ փորձառություն և գիտելիքներ: Մասնակցային գործընթացները թույլ են տալիս այդ ունակություններն անմիջականորեն փոխանցել երիտասարդներին:

Մասնակցությունը որոշումների կայացման գործընթացը դարձնում է առավել թափանցիկ, արդյունավետ, վստահելի, ներկայացուցչական, առկա կարիքների վերլուծության վրա հիմնված, ներկայացնում է տարբեր դերակատարների հնարավոր կարծիքները: Այս ամենը հնարավորություն է տալիս մոբիլիզացնել համայնքում առկա տարատեսակ ռեսուրսները, և, դրանք համախմբելով, բազմապատիկ արդյունք ստանալ: Բացի այդ, այս մոտեցման շնորհիվ խնդիրները կարող են լուծումներ ստանալ նոր մոտեցումների, գաղափարների և գործիքների շնորհիվ:

Ի՞նչ է երիտասարդահեն զարգացումը

«Երիտասարդահեն զարգացում» գաղափարը հիմնվում է համայնքում երիտասարդների ակտիվ մասնակցության հասկացության վրա, զորացնում է երիտասարդներին որպես իրենց համայնքի և հասարակության ակտիվ անդամներ:

ՄԱԿ-Հաբիթաթի կողմից անցկացված 2012թ.-ի ուսումնասիրության համաձայն երիտասարդներն իրենց հետ բերում են էներգիա, նոր գաղափարներ, եզակի (երիտասարդական) փորձառություն, նորարարական մոտեցումներ և այլ երիտասարդներին ընդգրկելու կարողություն: Երբ երիտասարդները ներգրավված են «Երիտասարդահեն զարգացում» գաղափարով առաջնորդվող նախաձեռնությունների մեջ, կանխվում է երիտասարդների վտանգավոր վարքագիծը, վերջիններս ձեռք են բերում կենսական և աշխատանքային մի շարք հմտություններ: Բացի այդ, երիտասարդների կողմից իրականացվող նախաձեռնությունների խրախուսումը կարևոր ներդրում է համայնքի և պետության զարգացման գործում:

Երիտասարդահեն զարգացման 5 հիմնական սկզբունքներն են՝

համայնքային զարգացման քաղաքականության, պլանի և գերակայությունների սահմանում,

սոցիալական տարածքի (ֆիզիկական և վիրտուալ) ստեղծում՝ երիտասարդահեն զարգացման գործընթացները և որոշումների մասնակցային կայացումը խթանելու համար,

մենթորության և աջակցության հնարավորություն համայնքի մեծահասակ շահառուների կողմից,

երիտասարդահեն զարգացման ուղենիշների և լավագույն օրինակների տարածում,

ներգրավում երիտասարդահեն զարգացման գործընթացներում՝ տեղականից մինչև համազգային և միջազգային:

Ուղենիշներ

Այս բաժնում ներկայացված երիտասարդահեն զարգացման ուղենիշները սերում են երիտասարդահեն զարգացման 5 հիմնական սկզբունքներից: Դրանցից յուրաքանչյուրում ներկայացված են թիրախ խմբերից (տեղական ինքնակառավարման մարմիններ, երիտասարդներ և երիտասարդական խմբեր/կազմակերպություններ) յուրաքանչյուրին հատուկ ուղենիշներ:

Սկզբունք 1.

Համայնքային զարգացման քաղաքականության, պլանի և գերակայությունների սահմանում

1.1 *Երիտասարդներ*

Երիտասարդահեն զարգացման ծրագրերի մշակման և արդյունավետ իրականացման առանցքը համայնքում բնակվող երիտասարդների ակտիվ դիրքորոշումն է և ներգրավումը իրենց համայնքի և իրենց համար էական նշանակություն ունեցող հարցերի և գործընթացների վերաբերյալ որոշումների կայացման մեջ: Համայնքի երիտասարդահեն զարգացման ծրագրերը և ռազմավարությունները պետք է մշակվեն երիտասարդների հետ, երիտասարդների համար և հաշվի առնելով երիտասարդների պատկերացումները լուծումների ցանկալի սցենարների վերաբերյալ:

- Համայնքահեն զարգացման ծրագրերի և ռազմավարությունների մշակման և իրականացման համար առաջնային աշխատանքերից մեկը պետք է լինի համայնքի սրտացավ և ակտիվ երիտասարդներից նախաձեռնող խմբի ստեղծումը:
- Խումբը պետք է կանոնակարգի իր աշխատանքները, կազմի իր աշխատանքների կազմակերպման և որոշումների ընդունման ներքին ժողովրդավարական կարգը:
- Խումբը պետք է իրականացնի համայնքի կարիքների վերլուծության աշխատանքներ և իր համար սահմանի այն առաջնային կարիքները, որոնք իրենց խումբը նախատեսում է անդրադառնալ:
- Պետք է գնահատվեն խմբի անդամների ունակությունները և կախված պլանավորված աշխատանքներից՝ սահմանվեն խմբի ուսուցողական կարիքները և դրանց լրացման հնարավորությունները:
- Խումբը պիտի իրականացնի հնարավոր գործընկերների, աջակիցների և ռեսուրսների քարտեզագրում և համագործակցությունների պլանավորում, որոնց կարիքը կա համայնքահեն զարգացման ծրագրի իրականացման ժամանակ:
- Պետք է մշակվի հստակ և հասանելի գործողությունների պլան/ծրագիր, որը պետք է ներառի կոնկրետ չափորոշիչներ արդյունավետության գնահատման համար:

1.2 *Երիտասարդական կազմակերպություններ*

Տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական մարմիններին, ոչ-պետական զարգացման կազմակերպություններին խիստ բարդ է (երբեմն նույնիսկ անհնար) աշխատել համայնքի երիտասարդների հետ անհատական մակարդակում: Երիտասարդների կարծիքը և մոտեցումները մշակելու, համակարգելու, ներկայացնելու և դրանց համայնքային զարգացման ծրագրերում ներգրավումն ապահովելու համար անհրաժեշտ է համայնքային երիտասարդական կազմակերպությունների և խմբերի ակտիվ դիրքորոշումը և ներգրավումը: Նման խմբերի բացակայության պայմաններում ցանկալի է համայնքի ակտիվ երիտասարդների նախաձեռնությամբ ստեղծել դրանք, մշակել ժողովրդավարական որոշումների ընդունման մեխանիզմներ և սկսել աշխատել ՏԻՄ-երի և այլ տեղական կառույցների հետ երիտասարդահեն զարգացման ծրագրերի մշակման ուղղությամբ:

- Տեղական մակարդակում գործող երիտասարդական կազմակերպությունները պետք է հստակ կերպով գիտակցեն իրենց դերը երիտասարդներին համայնքահեն զարգացման ծրագրերում ներգրավման և ռազմավարությունների մշակման գործում:
- Կազմակերպությունները պետք է քաջատեղյակ լինեն իրենց համայնքների իրավիճակների վերաբերյալ և պետք է աջակցեն համայնքի երիտասարդներին համայնքի կարիքների վերհանման և դրանց լուծումների մշակման գործընթացներում:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է միջնորդի դեր կատարեն համայնքի երիտասարդների և համայնքում աշխատող այլ կառույցների միջև (ՏԻՄ-եր, միջազգային կազմակերպություններ, ՁԼՄ-ներ և այլն)
- Կազմակերպությունները պետք է ըստ համայնքի երիտասարդների կարիքների կազմակերպեն նրանց հզորացման ուսուցողական և այլ ծրագրեր, որոնք հնարավորություն կստեղծեն երիտասարդների լիարժեք մասնակցության համար:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է օգնեն երիտասարդահեն զարգացման խմբերին մոբիլիզացնել ռեսուրսներ համայնքի զարգացման ծրագրերի համար:

1.3 *ՏԻՄ-եր*

Երիտասարդահեն զարգացման ծրագրերի մշակումը և իրականացումը անհնար է առանց տեղական ինքնակառավարման մարմինների մոտիվացիայի, քաղաքական կամքի դրսևորման և համայնքի երիտասարդների հետ գործընկերական հարաբերությունների ստեղծման համար անհրաժեշտ գործողությունների ձեռնարկման: ՏԻՄ-երի համար խիստ էական է ընկալել համայնքում բնակվող երիտասարդներին ոչ թե որպես պրոբլեմ, այլ որպես արժեքավոր ռեսուրս համայնքային զարգացման գործընթացները ակտիվացնելու և դրանց արդյունավետ իրականացման համար: Երիտասարդների ակտիվ ներգրավումը որոշումների ընդունման, ինչպես նաև ծրագրերի իրականացման գործընթացներում կարող է էապես փոփոխել համայնքային կյանքի կազմակերպման մշակույթը և բերել զգալի առաջընթացի:

- ՏԻՄ-երը պետք է տեղյակ լինեն իրենց համայնքներում գործող ակտիվ երիտասարդների և դրանց խմբերի մասին և նրանց հետ ձևավորեն գործընկերային հարաբերություններ:

  ՏԻՄ-երը պետք է մշակեն հստակ ծրագրավորված մոտեցում և կոնկրետ մեխանիզմներ համայնքի զարգացման ծրագրերում տեղի երիտասարդների և դրանց խմբերի հետ համագործակցության համար:
- ՏԻՄ-երը պետք է պարբերաբար տեղեկացնեն համայնքի ակտիվ երիտասարդությանը տեղական և ազգային մակարդակում իրականացվող համայնքային զարգացման ծրագրերի վերաբերյալ և ապահովեն երիտասարդների մասնակցությունը դրանց մշակման և իրականացման գործընթացներում:
- ՏԻՄ-երը պետք է ակտիվ կերպով ներգրավվեն միջհամայնքային փորձի փոխանակման ծրագրերում և ապահովեն համայնքի ակտիվ երիտասարդների մասնակցությունը այդ գործընթացներին ազգային և միջազգային մակարդակներում:
- Համայնքի զարգացման ռազմավարական առաջնայնությունների մշակման գործընթացը պետք է իրականացվի համայնքի երիտասարդների լիարժեք ներգրավմամբ և հաշվի առնելով նրանց յուրահատուկ կարիքները:
- ՏԻՄ-երը պետք է տեղյակ լինեն համայնքահեն զարգացման երիտասարդական խմբերի կարիքների մասին և համայնքային ռեսուրսները (տարածքային, ֆինանսական, փորձագիտական և այլ) տրամադրելի դարձնեն նրանց աշխատանքների կազմակերպման ապահովման համար:

Սկզբունք 2.

Սոցիալական տարածքի (ֆիզիկական և վիրտուալ) ստեղծում՝ երիտասարդահեն զարգացման գործընթացները և որոշումների մասնակցային կայացումը խթանելու համար

2.1 *Երիտասարդներ*

Համայնքային զարգացման երիտասարդահեն ծրագրերի և ռազմավարությունների մշակումը բավականին աշխատատար և երկարաժամկետ գործընթաց է: Նման գործընթացի կազմակերպման համար խիստ անհրաժեշտ են համապատասխան հարթակներ՝ ֆիզիկական տարածքներ և/կամ վիրտուալ հարթակներ, որոնք հնարավորություն կտան կազմակերպել համակարգված և շարունակական խմբային աշխատանք: Նման տարածքի օրինակ կարող է լինել, օրինակ՝ տվյալ համայնքի մշակույթի տունը, ակումբը, կամ որևէ սենյակ ՏԻՄ գրասենյակի տարածքում: Տարածքը պետք է հասանելի լինի աշխատանքներին մասնակցող երիտասարդների համար և հարմարեցված լինի նրանց կարիքներին: Ծրագրային և այլ տիպի աշխատանքների կազմակերպման համար այսօր ստեղծված են բազմաթիվ հարմարեցված վիրտուալ առցանց գործիքներ և հարթակներ, որոնց կիրառումը ևս կարող է նպաստել աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

- Խումբը պետք է քննարկի, թե իրենց համայնքահեն զարգացման ծրագրերի մշակման և իրականացման համար ինչպիսի հարթակներ և տարածքներ են պետք:
- Պետք է ուսումնասիրվեն ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կողմից տրամադրված գործիքները, համագործակցության, հաղորդակցության և ծրագրային աշխատանքը վիրտուալ տարածքներում կազմակերպելու համար և աշխատանքներ իրականացվեն դրանց գործարկման համար:
- Պետք է ուսումնասիրվի, թե ինչպիսի տարածքային հնարավորություններ են առկա տվյալ համայնքում և ինչպես կարելի է ստանալ դրանք օգտագործելու հնարավորություն:
- Պետք է հիշել, որ բոլորովին պարտադիր չէ նախնական փուլում ուժ և ռեսուրս ծախսել սեփական տարածքը ստեղծելու համար և կարելի է օգտագործել ՏԻՄ-երի, կրթական հիմնարկների և տարբեր տիպի բիզնես կառույցների անհատույց տրամադրված տարածքները:
- Սեփական տարածք ստեղծելու փուլում խմբի անդամները պետք է կատարեն որոշակի աշխատանքներ տարածքի օգտագործման կանոնների և կարգի մշակման և դրա գործարկման ուղղությամբ:
- Էական է նաև սեփական տարածքը ստեղծելու պարագայում ուշադրություն դարձնել, որ այն հասանելի և հարմարավետ լինի համայնքի տարբեր երիտասարդների և, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Կարևոր է որոշակի ժամանակ և էներգիա տրամադրել տարածքը դասավորելու և աշխատելու դրա դիզայնի վրա, որպեսզի այնտեղ ստեղծվի հատուկ տրամադրող, երիտասարդական ոգով մթնոլորտ:

2.2 *Երիտասարդական կազմակերպություններ*

Երիտասարդական կազմակերպությունները հիմնականում ունենում են իրենց գրասենյակային պայմանները, որոնք կարող են ծառայեցվել երիտասարդահեն զարգացման ծրագրերի կազմակերպմանը: ՀՀ-ում և սփյուռքում կան բազմաթիվ համայնքային զարգացումը խթանող կառույցներ, որոնք կարող են հետաքրքրված լինել համայնքային զարգացման ծրագրերում երիտասարդների մասնակցության խթանման նպատակով աջակցելու առանձին երիտասարդական ակումբի կամ կենտրոնի հիմնադրմանը: Տեղական երիտասարդական կազմակերպությունները կարող են համագործակցել ՏԻՄ-երի և այլ կառույցների հետ նման հարթակների տարածքների ստեղծման համար: Որոշ առցանց գործիքներ և հարթակներ արդեն իսկ օգտագործվում են երիտասարդական կազմակերպությունների կողմից: Այն առցանց գործիքները, որոնք օգտագործվում են տվյալ կազմակերպության կողմից, կարող են ուսուցանվել նաև համայնքի երիտասարդներին, որոնք ներգրավված են երիտասարդահեն զարգացման ծրագրերում:

- Համայնքահեն զարգացման խմբերին նախնական փուլում կարող են օգնել համայնքում գործող կազմակերպությունները՝ տրամադրելով նրանց աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ տարածքային ռեսուրսներ:
- Առավել փորձառու տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է օգնեն համայնքային խմբերին իրենց աշխատանքային տարածքները կազմակերպելու և կառավարելու հմտությունների տրամադրման միջոցով:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները կարող են ուսումնասիրել թվային տեխնոլոգիաների կողմից տրամադրված գործիքները խմբային աշխատանքի կազմակերպման և կառավարման համար, և դրանց մասին տեղեկացնեն համայնքի ակտիվ երիտասարդներին:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է ակտիվորեն ներգրավվեն ազգային և միջազգային ոլորտում առկա ռեսուրսների որոնման և դրանց կիրառմամբ երիտասարդների համար տեղական կենտրոնների և այլ ֆիզիկական և վիրտուալ հարթակների ձևավորման գործում:
- Համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծումը պետք է կազմակերպվի համայնքում առկա բոլոր ռեսուրսների մոբիլիզացիայի միջոցով, որտեղ տեղական երիտասարդական կազմակերպությունները կարող են ունենալ առանցքային դեր:
- Համայնքային կենտրոնը պետք է հիմնադրվի համայնքի բոլոր շահառուների մասնակցությամբ և խիստ կարևոր է, որ բոլոր հիմնական համայնքային դերակատարները ունենան փայատիրոջ զգացում:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները ՏԻՄ-երի հետ համատեղ պետք է մշակեն և իրականացնեն համայնքային երիտասարդական կենտրոնի աշխատանքներն ապահովող մասնագետների պատրաստման գործընթացներ:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է լիարժեք կերպով մասնակցեն համայնքային կենտրոնների գործունեության և զարգացման ծրագրերի կազմման, իրականացման և վերահսկման աշխատանքներին:

2.3 *ՏԻՄ-եր*

Երիտասարդների հետ աշխատանքը երիտասարդահեն զարգացման ծրագրերի մշակման ուղղությամբ խիստ հեշտանում է, եթե երիտասարդական խմբերի համար ստեղծվում են մինիմալ հնարավորություններ ունեցող ֆիզիկական տարածքներ: Տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ տնօրինում են որոշ տարածքներ, որոնք կարող են կիրառվել այս խնդրի լուծման համար, սակայն խիստ կարևոր է երիտասարդական խմբերի հետ համատեղ աշխատել տվյալ տարածքի երիտասարդների կարիքներին հարմարեցնելու և որոշակի որակի ստանդարտների ապահովման համար: Եվրոպայում բավականին լայն տարածում ունեն «բաց երիտասարդական կենտրոնները», որոնք իրենցից ներկայացնում են համայնքային երիտասարդական կենտրոն, որը բաց է համայնքի բոլոր երիտասարդների համար և հագեցված է երիտասարդների կրթությունը և ազատ ժամանցը որակյալ կերպով կազմակերպելու միջոցներով:

- ՏԻՄ-երը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն համայնքահեն զարգացման երիտասարդական խմբերին համապատասխան աշխատանքային և ժամանցային տարածքների ստեղծման հարցին:
- ՏԻՄ-երի ներկայացուցիչները պետք է ուսումնասիրեն երկրում և միջազգային դաշտում առկա լավ փորձը համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծման ոլորտում և հաշվի առնեն այդ գիտելիքները իրենց համապատասխան աշխատանքներում:
- Շատ համայնքներում արդեն իսկ առկա են հանրային սեփականություն հանդիսացող որոշ տարածքներ, որոնց համայնքային երիտասարդական կենտրոնի վերափոխման աշխատանքները կարելի է կազմակերպել՝ ներգրավելով մինիմալ ռեսուրսներ հանրային, միջազգային, տեղական գործարար և այլ դոնորական աղբյուրներից:
- Համայնքային երիտասարդական կենտրոնների հիմնման պարագայում ՏԻՄ-երը պետք է հաշվի առնեն, որ բոլորովին անհրաժեշտ չէ կառուցել հսկայական ենթակառուցվածքներ, որոնց պահպանումը հետագայում կարող է խնդիր դառնալ: Առավել արդյունավետ է ստեղծել մինիմալ հնարավորություններով կենտրոն, որը կարող է իր տարբեր կարիքների համար օգտագործել համայնքի այլ ենթակառուցվածների միջոցները (դպրոցներ, թատրոններ, մշակույթի տներ և այլն):
- ՏԻՄ-երը պետք է մոբիլիզացնեն համայնքում առկա տարբեր կառուցվածքների հնարավորությունները համայնքային երիտասարդական կենտրոնների պահպանման ապահովման համար, այլ ոչ թե փորձեն մեկ աղբյուրից լուծել կենտրոնի պահպանման խնդիրը, ինչը երկարաժամկետ հեռանկարում բավականին ռիսկային կարող է լինել:
- ՏԻՄ-երը պետք է ուղղակիորեն ներգրավված լինեն երիտասարդների հետ համատեղ համայնքային կնետրոնների կառավարման և զարգացման գործընթացներում, ինչպես նաև ապահովեն համայնքի այլ կառույցների ներգրավումը այդ գործընթացներում:
- ՏԻՄ-երը պետք է տեղական երիտասարդական խմբերի և կառույցների հետ համատեղ մշակեն համայնքային կենտրոնի աշխատանքի որակի չափորոշիչներ և ձևավորեն դրանց վերահսկման մասնակցային մեխանիզմներ:

Սկզբունք 3.

Մենթորության և աջակցության հնարավորություն համայնքի մեծահասակ և հավասարակից շահառուների կողմից

3.1 *Երիտասարդներ*

Երիտասարդահեն զարգացման ծրագրերի մշակման ժամանակ երիտասարդները հաճախ գտնվում են հետևյալ երկու ծայրահեղ վիճակներից մեկում. ա) գտնվում են մեծահասակներից կախվածության մեջ և չեն կարողանում ինքնուրույն քայլեր կատարել, բ) լիովին մերժում են մեծահասակների հետ համագործակցության անհրաժեշտությունը և հրաժարվում են գնալ որևէ երկխոսության: Իրականում համայնքի զարգացման երիտասարդահեն ծրագրերի մշակման արդյունավետության ապահովման կարևորագույն բաղադրիչներից է միջսերնդային երկխոսության ապահովումը: Համայնքի մեծահասակ բնակիչների կենսափորձը, կապերը, հնարավորությունները և ներուժը պետք է հաշվի առնվեն և հնարավորինս կիրառվեն երիտասարդների կազմակերպած բոլոր աշխատանքներում: Պակաս կարևոր չէ նաև նման մենթորության և աջակցության մեխանիզմների ստեղծումը այդ ոլորտում առավել մեծ փորձառություն ունեցող երիտասարդների կողմից համայնքահեն զարգացման ծրագրերի ոլորտում սկսնակներին օգնելու համար: Հավասարակիցների աջակցությունը շատ հաճախ առավել լավ է ընկալվում, արդյունավետ է լինում և ավելի քիչ դիմադրության հանդիպում: Հնարավոր է և պետք է կազմել մենթորական և խորհրդատվական խմբեր, որոնք կօգնեն երիտասարդներին ճիշտ ծրագրելու և իրականացնելու իրենց նախաձեռնությունները:

- Երիտասարդների խումբը պետք է քննարկի, թե ինչպիսի աջակցություն և խորհրդատվություն է իրենց անհրաժեշտ (միգուցե մասնագիտական) համայնքի զարգացման երիտասարդահեն ծրագրերի մշակման և իրականացման համար:
- Պետք է իրականացվի համայնքում առկա կամ համայնքի անդամների միջոցով հասանելի փորձագիտական ներուժի քարտեզագրում և դրա հետ աշխատանքների կազմակերպման ռազմավարություն:
- Շատ հաճախ համայնքի երիտասարդների շրջանում հնարավոր է գտնել մարդկանց, ովքեր ունեն այս կամ այն գիտելիքները և հասարակական աշխատանքի փորձ: Նրանց հետ աշխատանքը և նրանց միջոցով խորհրդատվական ծառայությունների կազմակերպումը «հավասարակիցը հավասարակցին» տարբերակով կարող է լինել խիստ արդյունավետ:
- Երիտասարդահեն զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ պետք է ստեղծել համայնքի փորձագետներից կազմված թեմատիկ խորհրդատվական խմբեր, որոնք կօգնեն թե՛ ծրագրերի մշակման և թե՛ իրականացման և գնահատման փուլերում:
- Համայնքում առկա երիատասարդ և մեծահասակ փորձագետներին ցանկալի է ներգրավել երիտասարդահեն զարգացման ծրագերում ներգրավված երիտասարդների անձնային աճին ուղղված անհատական աջակցության մենթորական կամ քոուչինգային ծրագրերում:

3.2 *Երիտասարդական կազմակերպություններ*

Համայնքներում գործող երիտասարդական կազմակերպությունները և խմբերը կարող են միջնորդի դեր կատարել համայնքի մեծահասակ ներկայացուցիչների և երիտասարդների միջև երիտասարդահեն զարգացման ծրագրեր կառուցելու գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար: Առաջին հայացքից կարող է թվալ, որ երիտասարդների միջև առավել փորձառուներից ավելի քիչ փորձվածներին նման աջակցության համար միջնորդություն պետք չէ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հավասարակիցների կողմից մենթորական և խորհրդատվական մեխանիզմների կիրարկումը ևս կարիք ունի ֆասիլիտացիայի և միջնորդության, ինչն առավել արդյունավետ կարող են կազմակերպել համայնքային խմբերն ու երիտասարդական կազմակերպությունները: Կազմակերպություններին և խմբերին կից և նրանց կազմում կարելի է ստեղծել խորհրդատվական խմբեր և փորձագետների տվյալների հենքեր, որոնք ըստ անհրաժեշտության կարող են աջակցել համայնքային զարգացման ծրագրերի իրականացման տարբեր փուլերի կազմակերպմանը (մշակում, իրականացում և արդյունավետության գնահատում): Մշակված տվյալների հենքերի և ստեղծված կապերի/պայմանավորվածությունների հիման վրա կարող են մշակվել նաև մենթորական և խորհրդատվական այլ մեխանիզմներ:

- Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է իրականացնեն համայնքում և նրա շուրջ եղած փորձագիտական ներուժի հստակ մշակված քարտեզագրում և դրա հիման վրա ստեղծեն համապատասխան տվյալների հենքեր:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները, հիմնվելով իրենց նախորդ գործունեության ընթացքում ձևավորված հեղինակության վրա, կարող են միջնորդել տեղական և այլ փորձագետների՝ աջակցելու համայքնահեն երիտասարդական զարգացման ծրագրեր իրականացնող խմբերին:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները փորձագիտական աջակցության և մենթորինգի կազմակերպման գործընթացներում պետք է հավասարապես կարևորեն թե՛ հասակակիցը-հասակակացին աջակցության սխեմաները, և թե՛ համայնքում առկա մեծահասակ փորձագետների և երիտասարդների կապի ապահովմանը:
- Կարևոր աջակցության մեխանիզմ կարող են լինել նաև տարբեր համայնքահեն զարգացման թեմատիկ ծրագրերի համար համապատասխան միջսերնդային կոնսուլտացիոն խորհուրդների և աշխատանքային խմբերի ստեղծումը, որը ևս կարող է միջնորդվել տեղական երիտասարդական կազմակերպությունների կողմից:

3.3 *ՏԻՄ-եր*

Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են մշակել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան համայնքի մեծահասակ անդամների և առավել փորձված երիտասարդների ներուժը ծառայեցնելու երիտասարդահեն ծրագրերի և ռազմավարությունների մշակմանը: Համայնքի մեծահասակ բնակչությունն ունի մեծ հնարավորություններ, թե՛ իրենց ինտելեկտուալ ներուժի և թե՛ կապերի և հնարավորությունների առումով, իսկ համայնքի փորձված երիտասարդները կարող են նման գործընթացները կազմակերպել առավել արդյունավետ կերպով, քանի որ իրենց հավասարակիցների հետ խոսում են նույն «լեզվով» և ավելի լավ գիտեն նրանց խնդիրները: Երիտասարդահեն ծրագրերի մշակումն ու իրականացումը կարող է շատ ավելի դյուրին դառնալ, եթե ՏԻՄ ներկայացուցիչները ուղղորդեն երիտասարդներին և երիտասարդական խմբերին դեպի համայնքի համապատասխան անդամները և միջնորդեն նրանց միջև երկխոսության և համագործակցության ծավալումը: ՏԻՄ հեղինակությունը կարող է խիստ հեշտացնել նախնական կապը և համագործակցության նախաձեռնումը այս երկու խմբերի միջև, ինչը կնպաստի ծրագրի արդյունավետությանը և ընդհանուր առմամբ միջսերնդային և ներսերնդային համերաշխության զարգացմանը համայնքում:

- ՏԻՄ-երը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն միջսերնդային համերաշխության և երկխոսության ապահովման աշխատանքների կազմակերպմանը, քանի որ համայնքների ռազմավարական զարգացումը հնարավոր է միայն այդ նախապայմանի ապահովման պարագայում:
- ՏԻՄ-երը տեղական երիտասարդական կազմակերպությունների հետ համատեղ պետք է քարտեզագրեն համայնքում առկա փորձագիտական ներուժը և միջնորդեն մեծահասակ փորձագետների և փորձված երիտասարդների մասնակցությունը համայնքահեն երիտասարդական ծրագրերի կազմակերպմանը:
- ՏԻՄ-երը պետք է ստեղծեն խորհրդատվական աշխատանքային մարմիններ որոնք հնարավորություն կտան համայնքի տարբեր շահառուների իրենց ներուժը ներդնել տարբեր ոլորտներում համայնքահեն երիտասարդական ծրագրերի իրականացման գործում:
- Համայնքահեն զարգացման ծրագրերում հատկապես արդյունավետ է անհատ փորձագետների կողմից երիտասարդական խմբերին տրամադրվող մենթորական և քոուչինգային աջակցությունը, որը հնարավորություն է տալիս առավել երկարաժամկետ և ռազմավարական մոտեցում ցուցաբերել միջսերնդային երկխոսության գործընթացներին:
- ՏԻՄ-երը կարող են նաև միջնորդել և կազմակերպել երկրի այլ համայնքներից փորձագիտական ներուժի ներբերման գործընթացների կազմակերպմանը, ինչը թույլ կտա թե՛ բազմակել այլ համայնքների լավ փորձը և թե՛ կնպաստի միջհամայնքային հարաբերությունների բարելավմանը և ամրապնդմանը:

Սկզբունք 4.

Երիտասարդահեն զարգացման ուղենիշների և լավագույն օրինակների տարածում

4.1 *Երիտասարդներ*

Շատ երիտասարդահեն զարգացման ծրագրեր սկսվել են և հաջողության են հասել, քանի որ տվյալ համայնքի մեկ կամ մի քանի երիտասարդներ իմացել են տվյալ երկրում կամ մեկ այլ տեղ իրականացված համանման հաջողված ծրագրերի փորձերի մասին: Երիտասարդները, որոնք ներգրավվում են տվյալ տիպի ծրագրերում, պետք է հատուկ ուշադրություն դարձնեն իրենց աշխատանքների բարձր տեսանելիության աստիճանի ապահովմանը սոցիալական ցանցերում, ԶԼՄ-ներով, ինչպես նաև տեսանելիության ապահովման տարբեր այլ միջոցառումների կազմակերպման միջոցով: Ծրագրի տեսանելիությունը թույլ է տալիս ներգրավել այլ երիտասարդների, աջակցություն ստանալ համայնքի մեծահասակ անդամներից, ինչպես նաև ապահովելու ՏԻՄ-երի ուշադրությունը և աջակցությունը երիտասարդահեն զարգացման ծրագրերի նկատմամբ: Տեսանելիությունը նպաստում է նաև տվյալ լավ օրինակի տարածմանը և կիրառմանը այլ համայնքներում բնակվող երիտասարդների կողմից:

- Համայնքային երիտասարդական խումբը պետք է կազմի հստակ տեսանելիության և արդյունքների ներկայացման/տարածման պլան, որը պետք է կիրառի տարբեր տիպի գործիքներ և մեթոդներ:
- Տեսանելիության պլանը և PR ծրագիրը պետք է ունենան կոնկրետ և չափելի նպատակներ, ինչպես նաև իրականացման վերահսկման մեխանիզմներ:
- Թիմում պետք է լինեն կոնկրետ մարդիկ, որոնք պետք է իրենց վրա վերցնեն տեսանելիության և PR-ի ապահովման հարցերը: Այդ մարդիկ պետք է ստանան համապատասխան վերապատրաստումներ և սովորեն բազային գիտելիքներ այս ոլորտում արդյունավետ աշխատանք ծավալելու համար:
- Խմբի անդամները պետք է մշակեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ PR հարթակներ սոցիալական կայքերում (Facebook, ok.ru, vk.com, youtube.com, instagram և այլն) և մշակեն դրանց պարբերական թարմեցման և համալրման պլան:
- Խմբի բոլոր աշխատանքները և հատկապես ստացված արդյունքները պետք է անընդհատ կերպով լուսա և տեսանկարահանվեն, պատրաստվեն ռեպորտաժներ, նյութեր և դրանք տարածվեն սեփական և գործընկեր կազմակերպությունների միջոցներով:
- Խումբը պետք է կապեր հաստատի տեղական և ազգային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ և նրանց հետ գործընկերային հարաբերություններ ստեղծելու միջոցով ապահովի իրենց միջոցառումների գերազանց լուսաբանում:
- Տեսանելիության և PR պլանի կատարումը պետք է պարբերաբար ամփոփել, վերահսկել դրված նպատակների և խնդիրների իրագործման աստիճանը և ըստ անհրաժեշտության կատարել բարեփոխումներ:
- Տեսանելիության ապահովման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձվի սեփական համայնքի ներկայացուցիչների վրա, որոնք պետք է իմանան և բարձր գնահատեն երիտասարդահեն զարգացման նախաձեռնությունների կարևորությունը:
- Ժամանակի ընթացքում և ըստ հնարավորության պետք է տեսանելիություն ապահովվի նաև ազգային ԶԼՄ-ների միջոցով և միջազգային լրատվական հարթակներում:

4.2 *Երիտասարդական կազմակերպություններ*

Երիտասարդական որոշ կազմակերպություններ և խմբեր ավելի քիչ ուշադրություն են դարձնում բուն աշխատանքերի կազմակերպմանը, քան լուսաբանման և PR-ի կազմակերպմանը: Սակայն շատ են նաև այն խմբերը, որոնք գերազանց աշխատանք են իրականացնում երիտասարդահեն զարգացման տարբեր ուղղություններով, սակայն նրանց հաջողությունների և լավ փորձի մասին ոչ ոք չի իմանում: Ինֆորմացիոն հասարակության արդի իրականությունում խիստ կարևոր է լուրջ ուշադրություն դարձնել լուսաբանմանը և տեսանելիության ապահովմանը: Երիտասարդական կազմակերպությունների և խմբերի կողմից իրականացված համակարգված տեսանելիության ապահովման միջոցառումները նաև հնարավորություն են տալիս հաշվետու և թափանցիկ լինել իրենց իսկ համայնքների բնակիչների նկատմամբ, ինչը կարող է մեծապես նպաստել համայնքի կողմից լրացուցիչ աջակցության ներգրավմանը: Շատ կարևոր է նաև լավ փորձի և ստացված ծրագրերի արդյունքների ամփոփումը և ներկայացումը այլ համայնքերում գործող գործընկերներին:

- Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է ունենան իրենց համայնքում իրականացվող երիտասարդահեն զարգացման ծրագրերի մասին համապարփակ տեղեկատվություն՝ համալրված ֆոտո, վիդեո, տեքստային նյութերով և վիճակագրական տվյալներով:
- Կազմակերպությունները պետք է ամեն կերպ աջակցեն երիտասարդահեն զարգացման խմբերի տեսանելիությանը՝ դրա համար օգտագործելով իրենց՝ նախկինում ստեղծած կապերը լրատվամիջոցների և այլ տեղեկատվական ցանցերի հետ:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է աջակցեն համայնքի ակտիվ երիտասարդներին զարգացնելու իրենց կազմակերպած ծրագրերի տեսանելիության ապահովման և PR-ի կազմակերպման ունակությունները՝ դրա համար կազմակերպելով ուսուցողական, մենթորինգի և քուչինգի ծրագրեր:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է օգտագործեն բոլոր հնարավորությունները համայնքի տարբեր շահառուներին ծանոթացնելու երիտասարդահեն զարգացման ծրագրերի հաջողություններին և լավ փորձին:

4.3 *ՏԻՄ-եր*

Համայնքային տեղական ինքնակառավարման մարմինների և տեղական երիտասարդության հաջող համագործակցության փորձերի ներկայացումը տարբեր մակարդակներում երիտասարդահեն զարգացման ծրագրերի կարևորագույն բաղադրիչներից մեկը պետք է լինի: ՏԻՄ-երը պետք է օգտագործեն իրենց տեղեկատվական մեխանիզմները ՁԼՄ-ների, սոցիալական ցանցերի և միջհամայնքային համագործակցության տարբեր հարթակների միջոցով պետական և քաղաքացիական հասարակության տարբեր կառույցներին, ինչպես նաև ընդհանուր առմամբ քաղաքացիներին նման ծրագրերի մասին տեղեկացնելու համար: Նման տեղեկացումը թույլ կտա ոչ միայն բարձրացնել հասարակության գիտակցության աստիճանը երիտասարդահեն զարգացման հայեցակարգի վերաբերյալ և խթանել այլ համայնքներում այս մոդելի կիրառումը, այլև կավելացնի այս ոլորտի նկատմամբ ուշադրությունը և հոգածությունը պետական մարմինների և այլ կառույցների կողմից:

- ՏԻՄ-երը պետք է ունենան համայնքի երիտասարդների հետ համատեղ մշակված հստակ մեխանիզմներ պարբերաբար ստանալու որակյալ տեղեկատվություն իրենց համայնքներում իրականացվող երիտասարդահեն զարգացման ծրագրերի մասին:
- ՏԻՄ-երը պետք է միջնորդեն տեղական և ազգային ՁԼՄ-ների ներկայացուցիչներին աջակցելու իրենց համայնքի երիտասարդների իրականցված հաջող ծրագրերի և լավ փորձը օպերատիվ լուսաբանման կազմակերպման համար:
- Ցանկալի է պարբերաբար (տարեկան կամ կիսամյակը մեկ) ամփոփել համայնքում իրականացված երիտասարդահեն զարգացման ծրագրերը, դրանց արդյունքները և ներկայացնել դրանք ՏԻՄ-ի տեղեկատվական միջոցների կամ առանձին մամլո հաղորդագրությունների/ասուլիսների միջոցով:
- ՏԻՄ-երը պետք է միջհամայնքային համագործակցության միջոցառումների ժամանակ փոխանակեն տեղեկատվություն իրենց համայնքներում երիտասարդների իրականացված հաջողված ծրագրերի մասին՝ ապահովելով դրանց բազմարկումը և իրականացումը նաև այլ համայնքներում:

Սկզբունք 5.

Ներգրավում երիտասարդահեն զարգացման գործընթացներում՝ տեղականից մինչև համազգային և միջազգային



5.1 *Երիտասարդներ*

Իրենց համայնքային զարգացման երիտասարդահեն ծրագրերը նախաձեռնելու պահին շատ քիչ երիտասարդներ են պատրաստ միաժամանակ սկսել համագործակցել իրենց և այլ երկրների, այլ համայնքների համանման կառույցների և խմբերի հետ, կամ սկսել մասնակցել համաշխարհային համանման գործընթացների կամ հարթակների: Սակայն որոշ փորձ կուտակելուց և հաջողությունների հասնելուց հետո շատ կարևոր է գիտակցել միջազգային համագործակցության և լոկալ գործընթացները համաշխարհային համատեքստում տեսնելու անհրաժեշտությունը: Էական է գիտակցել, որ փորձի և գիտելիքների կիսումը միջազգային ոլորտում կարող է խիստ հարստացնել համայնքային զարգացման ծրագրերը և բարձրացնել դրանց որակը, ինչպես նաև բացում է նոր հնարավորություններ և ուղիներ ավելի լայնածավալ և համընդգրկուն աշխատանքների նախաձեռնման համար: Կան բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, ցանցեր, ՏՀՏ հարթակներ և սոց. ցանցային խմբեր. որոնք առավել դյուրին են դարձնում տարբեր երկրներում բնակվող երիտասարդների համագործակցությունը, մտքերի փոխանակումը և համագործակցության ծրագերի նախաձեռնումը:

- Երիտասարդահեն զարգացման ծրագրեր իրականացնող խմբերը պետք է լուրջ ուշադրություն դարձնեն իրենց աշխատանքային ոլորտներում միջազգային լավ փորձի ուսումնասիրմանը:
- Քանի որ ոչ բոլոր երիտասարդներն են տիրապետում օտար լեզուների, նախնական փուլերում ցանկալի է գտնել օտար լեզուներին տիրապետող մի քանի երիտասարդի, ովքեր կսկսեն կազմակերպել խմբի միջազգային փորձի ծանոթացման և միջազգային համագործակցության նախաձեռնությունները:
- Շատ կարևոր է նաև կապեր հաստատել սեփական երկրում գործող այլ համայնքներում աշխատող երիտասարդական խմբերի հետ և նրանց հետ կազմակերպել փորձի փոխանակման, փոխադարձ ուսուցման և համագործակցության ծրագրեր:
- Անհրաժեշտ է որոշակի ժամանակ և ռեսուրս հատկացնել միջազգային համագործակցության հնարավորությունների ուսումնասիրման և այդ ոլորտում որոշակի գիտելիքներ և փորձ ձեռք բերելու համար:
- Ցանկալի է կազմակերպել խմբի անդամների լեզվական ունակությունների զարգացման և միջազգային համագործակցության ծրագրերի կազմակերպման ունակությունների ձեռք բերման ուսուցողական միջոցառումներ:
- Կարևոր է պարբերաբար ուսումնասիրել երիտասարդական աշխատանքի ոլորտում միջազգային դաշտում տեղի ունեցող գործընթացները, դրանց զարգացման հիմնական տենդենցները և ուղիներ գտնել խմբի աշխատանքները ըստ անհրաժեշտության տեղական մակարդակից միջազգային մակարդակ դուրս բերելու համար:

5.2 *Երիտասարդական կազմակերպություններ*

Շատ հաճախ երիտասարդական կազմակերպություններին և խմբերին թվում է, թե իրենք միակն են այսպիսի բարդ իրավիճակում, որ իրենց խնդիրները խիստ յուրահատուկ են, և համախոհ խմբեր և կազմակերպություններ գտնելը խիստ բարդ է: Միջազգային հանդիպումներին մասնակցությունը, համատեղ միջազգային երիտասարդական ծրագրերի կազմակերպումը կարող է հսկայական օգուտ տալ տեղական խմբերին, հարստացնել նրանց գործիքարանները և լրիվ նոր որակ փոխանցել հետագա աշխատանքներին: Նախքան միջազգային ոլորտ դուրս գալը, լավ սկիզբ կարող է հանդիսանալ տվյալ երկրի այլ համանման համայնքների հետ աշխատանքը և ազգային մակարդակի համագործակցության հարթակների նախաձեռնումը, որից հետո առավել հեշտ կլինի անցնել միջազգային և գլոբալ գործընթացների մասնակցությանը:

- Երիտասարդական տեղական կազմակերպությունները պետք է աջակցեն համայնքահեն զարգացման ծրագրերում ընդգրկված երիտասարդներին և դրանց խմբերին ազգային և միջազգային փորձի հետ ծանոթացման և համապատասխան համագործակցության ծրագրերի մշակման և իրականացման գործում:
- Կազմակերպությունները հաճախ տիրապետում են տեղեկատվության համայնքային զարգացման խնդիրների վերաբերյալ ազգային և միջազգային ծրագրերի և հարթակների մասին, որը պետք է համակարգված կերպով տրամադրվի և ուսուցանվի համայնքի ակտիվ երիտասարդներին:
- Միջազգային և ազգային համագործակցության սեփական ծրագրերի ծավալման համար խիստ էական է հնարավորինս շատ մասնակցել միջազգային և ազգային մակարդակում անցկացվող բազմաբնույթ միջոցառումների: Տեղական կազմակերպությունները հնարավորինս պետք է նման հնարավորություններ ընձեռեն համայնքի երիտասարդներին:
- Խիստ կարևոր է հնարավորինս ազգային և միջազգային մակարդակի ծրագրեր իրականացնել հենց համայնքում, համայնքի երիտասարդների և այլ շահառուների մասնակցությամբ, ինչը մեծապես կնպաստի համայնքահեն զարգացման երիտասարդական հետագա ծրագրերի որակի բարձրացմանը:
- Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է օգնեն համայնքի ակտիվ երիտասարդներին կիրառելու ժամանակակից ՏՀՏ գործիքները և սոցիալական պլատֆորմաները ազգային և միջազգային մակարդակում տեղի ունեցող գործընթացների մասին տեղեկանալու և սեփական հաջողությունների և լավ փորձի մասին տեղեկատվություն տարածելու համար:
- Պետք է զարգացնել միջազգային և ազգային կամավորական ծրագրերի միջազգային և սփյուռքահայ կամավորներին տարբեր երկրներից համայնք բերելու, ինչպես նաև համայնքի երիտասարդներին միջազգային երկարաժամկետ կամավորական ծրագրերի ուղարկելու համար:

5.3 *ՏԻՄ-եր*

Տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ հնարավորություններ են ունենում մասնակցելու ազգային և միջազգային տարաբնույթ միջոցառումների, որոնք կարող են լավ հարթակ հանդիսանալ տեղական մակարդակում իրականացվող երիտասարդահեն զարգացման ծրագրերի մասին տեղեկատվության տարածման, այլ երկրներում նման աշխատանքներով զբաղվող կառույցների հետ կապերի ստեղծման, ինչպես նաև ՏԻՄ ներկայացուցիչների և համայնքային երիտասարդական խմբերի ներկայացուցիչների համար փորձի փոխանակման և ունակությունների զարգացման միջազգային հնարավորությունների հայթայթման համար: Հաճախ տեղական համայնքները ունեն քույր համայնքներ, որոնց հետ կան երկարաժամկետ համագործակցության պայմանագրեր, որոնք նունպես կարող են ծառայեցվել համայնքի երիտասարդահեն ծրագրերին միջազգային չափում տալու համար: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ տեղական մակարդակում հաջող աշխատանքի զարգացման բնական հաջորդ քայլն է միջազգային համագործակցության հնարավորությունների ստեղծումը:

- ՏԻՄ-երի աջակցությունը խիստ կարևոր է տեղական երիտասարդահեն զարգացման ծրագրեր իրականացնող խմբերի ազգային և միջազգային համագործակցության ծավալման համար, ուստի ցանկալի է այս ոլորտի զարգացումն ինտեգրել համայնքի ռազմավարական զարգացման ծրագրերում:
- ՏԻՄ-երի ներկայացուցիչները պարբերաբար հնարավորություններ են ունենում մասնակցելու ազգային և միջազգային լայնամասշտաբ միջոցառումների, որոնցից որոշներին խրախուսվում է համայնքի երիտասարդական խմբերի և կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավումը պատվիրակությունների կազմում: Նման հնարավորության առկայության պարագայում պետք է խթանել համայնքի երիտասարդների մասնակցությունը:
- Ըստ հնարավորության ցանկալի է համայնքային բյուջեների պլանավորման ժամանակ որոշ ռեսուրսներ նախատեսել համայնքի երիտասարդների միջազգային շարժունության խթանման համար և մշակել թափանցիկ ու հստակ մեխանիզմներ դրանց օգտագործման համար:
- Համայնքահեն զարգացման խմբերի կողմից տեղական համայնքում միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման ժամանակ խիստ կարևոր է ամեն կերպ աջակցել երիտասարդական խմբերին թե՛ քաղաքական և թե՛ համայնքային ռեսուրսների օգտագործման հնարավորության ընձեռման տեսանկյուններից:

Երիտասարդահեն զարգացման ծրագրերի օրինակներ

«Երիտասարդները հանուն զարգացման» ծրագրի շրջանակներում մասնակիցների կողմից իրականացվել են տեղական երիտասարդահեն ծրագրեր ՀՀ մի շարք համայնքներում: Ստորև ներկայացնում ենք այդ ծրագրերից մի քանիսը՝ հատուկ հղում կատարելով վերջիններիս երիտասարդահենությանը:

Ծրագրերն այս կամ այն կերպով արտացոլում են երիտասարդահեն զարգացման 5 հիմնական սկզբունքները: Ձեզ հետ կիսում ենք նաև այդ ծրագրերի շահառու կողմերի՝ ՏԻՄ ներկայացուցիչների ու երիտասարդների խորհուրդները այլ ՏԻՄ-երին ու երիտասարդներին:

«Այգին որպես մասնակցության հարթակ» ծրագիրն իրականացվում է Արագածոտնի մարզի Բյուրական համայնքում՝ նպատակ ունենալով խթանել համայնքի բնակիչների՝ հատկապես երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքի զարգացման գործընթացին: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում էր մշակել մասնակցային կառավարման ռազմավարություն, որի իրականացման համար էլ ստեղծվեց համայնքային այգի: Այգու տարածքում կազմակերպվում են «ՏԻՄ-համայնքի բնակիչներ» ձևաչափով քննարկումներ, Ավագանու նիստեր և մի շարք այլ հանդիպումներ:

«Երիտասարդները պետք է լինեն նախաձեռնող և հիշեն, որ ՏԻՄ-երիտասարդ համագործակցությունը կարող է լինել շահավետ, երբ ՏԻՄ-ը հստակ տեսնի, թե տվյալ նախաձեռնությունն ինչ օգուտ կարող է տալ համայնքին, օրինակ՝ հետագայում եկամուտ, աշխատատեղ կամ զբաղվածություն ապահովող ծրագիր, ինչպիսին որ իմն է:»

«Այգին որպես մասնակցության հարթակ» ծրագրի ղեկավար Պողոս Հովհաննիսյան

«Շատ ողջունելի էր, որ Պողոսն իրականացնում է նման ծրագիր: Առհասարակ, նախաձեռնությունները կարող են արդյունավետ լինել, եթե կա համագործակցություն ՏԻՄ-ի հետ, քանի որ համայնքի կարիքների վերաբերյալ տեղեկացվածությունը կարող է օգնել ծրագրի ճիշտ բովանդակության և ուղղվածության մշակմանը. արդյունքում կշահեն բոլորը:»

Բյուրական համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մկրտչյան

«Էկո պայուսակներ» ծրագիրն իրականացվում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում՝ նպատակ ունենալով բարձրացնել պոլիէթիլենային տոպրակների կիրառման վնասակար ազդեցության վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև զանազան միջոցառումների օգնությամբ խթանել թղթե և կտորե տոպրակների տարածումը: Ծրագրի կարևորությունը մասնավորապես արդիական է այս համայնքում՝ հաշվի առնելով Սևանա լճի ափերին հաճախ նկատելի պոլիէթիլենային տոպրակների աղբակույտերը:

«Թե՛ ՏԻՄ-երը, թե՛ հենց երիտասարդները պետք է հիշեն, որ երիտասարդներն են հասարակության շարժիչ ուժը: Ճիշտ կլինի, որ երիտասարդները հանդես գան իրենց համայնքի որևէ խնդրի լուծման համար կոնկրետ առաջարկով, այլ ոչ թե լինեն բողոքողի և պահանջողի դերում, իսկ ՏԻՄ-երն էլ չթերագնահատեն նրանց և հաշվի նստեն նրանց հետ:»

«Էկո պայուսակներ» ծրագրի ղեկավար Արթուր Մելքոնյան

«ՏԻՄ այլ ներկայացուցիչների խորհուրդ կտամ մշտապես պահել այլ ՏԻՄ-երի հետ կապը, տեղեկանալ նրանց համայնքային զարգացման հաջողություններին և դրանք կիրառել սեփական համայնքների զարգացման համար:»

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյան

«Նոր շունչ Կարբի համայնքին» ծրագիրն իրականացվում է Արագածոտնի մարզի Կարբի համայնքում՝ նպատակ ունենալով խթանել Կարբիի համայնքային կյանքի վերածնունդն ու, մասնավորապես, երիտասարդական մասնակցության ակտիվացումը: Ծրագրի արդյունքում համայնքն արդեն ունի իր առաջին երիտասարդական կենտրոնը, որտեղ ամեն շաբաթ տեղի են ունենում երիտասարդական հանդիպումներ, գործում են տարբեր ակումբներ:

«Երիտասարդ-ՏԻՄ համագործակցությունը շահավետ է երկու կողմին էլ. երիտասարդների համար կարող է լինել կարիերայի սկիզբ, իսկ ՏԻՄ-երի համար՝ թարմ և այլընտրանքային մոտեցում:»

«Նոր շունչ Կարբի համայնքին» ծրագրի թիմ

ՏԻՄ-երը պետք է փորձեն ամեն կերպ ներգրավել երիտասարդներին համայնքի կառավարման գործերում շենքի պատերից դուրս: Երբ տեսնում ես, որ երիտասարդները հավաքվում, քննարկում են և համայնքապետարանին առաջարկ են ներկայացնում, չես կարող հաշվի չնստել նրանց հետ: Սիրում եմ, երբ երիտասարդները համառ և հետևողական են լինում իրենցնախաձեռնություններում:

Կարբի համայնքի ղեկավար Կարո Բաղդասարյան

«Աշխատանքի հեշտացում տրակտորի միջոցով» ծրագիրն իրականացվում է Շիրակի մարզի Կրաշեն համայնքում՝ նպատակ ունենալով խթանել համայնքի զարգացումը տրակտորի գնման միջոցով: Այն օգտագործվում է Կրաշեն համայնքի անմշակ հողերը մշակելու և բերք ստանալու համար: Ներկայումս համայնքի տասնյակ բնակիչներ աշխատանքով կապահովվեն, որն էլ իր հերթին կնվազեցնի արտագաղթողների թիվը: Մշակված հողերից ստացած ողջ շահույթն օգտագործվել է համայնքում խաղահրապարակ կառուցելու համար, որը դարձել է հաճելի հավաքատեղի ինչպես համայնքի փոքրիկ բնակիչների, այնպես էլ նրանց ծնողների համար:

ՏԻՄ-երի հետ համագործակցության համար երիտասարդները պետք է ավելի բաց լինեն և հավատան իրենց ուժերին: Շատ կարևոր է նաև անընդհատ աշխատել սեփական ունակությունների և հմտությունների զարգացման ուղղությամբ:

«Աշխատանքի հեշտացում տրակտորի միջոցով» ծրագրի ղեկավար Հռիփսիմե Պետրոսյան

Երբ ինձ հարևան համայնքներից հարցնում են, թե ինչպես է ստացվում, որ մեր երիտասարդները կարողանում են նման ծրագիր իրականացնել համայնքում, ես պատասխանում եմ, որ կարևոր է ճիշտ գնահատել երիտասարդների այլընտրանքային ու նորարարական մտածելակերպը և քաջալերել նրանց նախաձեռնությունները: Մեր համագործակցությունը կարող է վառ օրինակ լինել մյուս համայնքների համար, քանի որ եթե կա գաղափար և ցանկություն, կարելի է անգամ փոքր բյուջերով գործ անել:

Շիրակի մարզի Կրաշեն համայնքի ղեկավար Արտուշ Սիմոնյան

Վերջաբան

Լինում է, չի լինում, երկու գորտ. մեկը՝ նիհար, մյուսը՝ գեր: Մի օր որոշում են գնալ ուտելիք փնտրելու: Երկար թռչկոտելուց հետո պատահմամբ հայտնվում են կաթով լի խնոցու մեջ: Փորձում են դուրս գալ, բայց ապարդյուն: Գեր գորտը դիմում է նիհարին.

- Ընկե՛ր, լողալն անիմաստ է, միևնույն է՝ խեղդվելու ենք:

- Մի հուսահատվիր և շարունակիր ձեռքերդ ուժեղ թափահարելով լողալ: Գուցե ինչ-որ մեկը մեզ կնկատի, - ասաց նիհար գորտը:

Նրանք շարունակեցին լողալ: Որոշ ժամանակ անց գեր գորտը կրկին բողոքեց.

- Ընկե՛ր, ես ուժասպառ եմ եղել: Այլևս չեմ ուզում շարունակել, քանի որ անիմաստ է, չինչ չի փոխվելու:

Գեր գորտը դադարում է լողալ ու խորտակվում է: Իսկ ահա նիհար գորտը շարունակում է ավելի մեծ ուժով թափահարելով լողալ: Տաս րոպե անց ոտքերի տակ զգում է ինչ-որ անհասկանալի պինդ մարմին: Պարզվում է՝ այդքան եռանդով ձեռքերը թափահարելուց կաթը դարձել էր կարագ: Կանգնում է կարագի վրա ու դուրս թռնում խնոցուց:

Առակն ինչ կցուցանե.

Երբեք պետք չէ հուսահատվել, քանի որ անգամ այդ պահին անելանելի թվացող իրավիճակներից կա ելք, եթե կա ցանկություն և պատրաստակամություն: